ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2024-2040 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ 02.08.2024 12:49:10	Թեև կլիմայի փոփոխությունը ռազմավարության տեքստում նկարագրված է, որպես խաչվող թեմա, սակայն այն պատշաճ ուշադրության չի արժանացել ռազմավարական նպատակներն ու ծրագրերը կազմելիս: Կանանց վերարտադրողական առողջության վատթարացման վրա կլիմայի վատ ազդեցության, մասնավորապես հանքարդյունաբերության արդյունքում առաջացող ծանր հետևանքների մասին կան բազմաթիվ հետազոտություններ: Ուստի թե՛ պտղաբերության ցուցանիշների բարձրացման, թե՛ առողջ ծերացման, թե՛ մարդկային կապիտալի զարգացման տեսանկյունից սա առաջնային մտահոգության առարկա ու թիրախ պետք է հանդիսանա: Առաջարկում	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Համաձայն ենք, որ կան տարբեր ուսումնասիրություններ շրջակա միջավայրի և հանրային առողջության միջև փոխհարաբերությունների վերաբերյալ: Հարկ է նշել, որ ռազմավարական փաստաթղթի մշակման մեջ ներգրավված միջազգային պրակտիկան և փորձաքննությունն առաջարկում են լուծումներ դիտարկել այսպես կոչված «Վնասի նվազեցման քաղաքականության» (Harm Reduction) շրջանակում	

		ենք մշակել ռազմավարական նպատակներ և ծրագրեր՝ թիրախավորելով առողջ շրջական միջավայրի պահպանումն ու զարգացումը:	ներկայացված մի շարք խնդիրների լուծման համար: Այդ իսկ պատճառով, որպես երկրորդ ռազմավարական նպատակի մաս, մենք առաջարկում ենք առաջիկա տարիներին մշակել և իրականացնել Վնասի նվազեցման (Harm Reduction) համապարփակ քաղաքականություն:	
2	Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ 02.08.2024 12:49:10	Նախագծում նկարագրված ռազմավարական և մասնավոր նպատակներն ու դրանց ուղղված ծրագրերի մի մասը կոնկրետ չեն: Ռազմավարության ֆինանսավորման բաժինը ֆինանսական ռեսուրսների բաշխումը նկարագրում է ըստ նպատակների և ոչ ըստ ծրագրերի: Ուստի ակնհայտ է, որ որոշ ծրագրեր կարող են ֆինանսավորում չունենալ և չդառնալ գործողություններ: Կարևորում ենք հատկապես Ծրագիր 1.2.2-ը: Ծրագիր 1.2.2-ը՝ Հակաբեղմնավորման արդյունավետ քաղաքականության իրականացում և սեռական կրթության և առողջապահության հասանելիությունը: Առաջարկում ենք ծրագիր ավելի հստակեցնելու համար այն ձևակերպել այսպես՝ «Հակաբեղմնավորման արդյունավետ քաղաքականության իրականացում և համապարփակ սեռական կրթության և	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Նշենք, որ այս փուլում ռազմավարական ծրագիրը ներկայացված է ռազմավարական նպատակների և ծրագրերի մակարդակով: Ռազմավարական ծրագրի մշակման շրջանակներում պատրաստվել է նաև գործողությունների հատուկ ծրագիր, որը մանրամասնում է ծրագրերի կոնկրետ միջոցառումները (նշելով պատասխանատու մարմինները, իրականացման ժամկետները, շարունակական մոնիտորինգի ցուցանիշները, իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների գնահատումը):	

		սեռական ու վերարտադրողական առողջապահության հասանելիությունը»: Սա խաչվող ծրագիր կլինի ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության գործառույթների շրջանակում:	Գործողությունների այս ծրագիրը ներառում է ավելի քան 190 միջոցառում և քննարկման կներկայացվի ռազմավարական ծրագրի ընդունումից հետո:	
3	Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ 02.08.2024 12:49:10	Նախագծում Ծրագիր 3.2.5-ը նկարագրված է, որպես «Հանրային ծառայության և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի միջսերնդային համագործակցությունը խթանող ծրագրեր»: Ծրագրի անվանումն ինքնին անհասկանալի է, իսկ բովանդակության մասին կարելի է միայն ենթադրել, որ այն առնչվում է ավագ սերնդի ներգրավմանը մինչև 2 տարեկան երեխաների խնամքին: Անհասկանալի է, թե խոսքը գնում է խնամքի կենտրոնների, թե նույն տնային տնտեսություններում տատիկ-պապիկների ներգրավմանը մինչև երկու տարեկան երեխաների խնամքում: Առաջարկում ենք հստակեցնել այս ծրագիրը և առավել խորքային ներկայացնել ծրագրի դրական և բացասական կողմերը թե՛ երեխաների, թե՛ ավագ սերնդի ներկայացուցիչների համար:	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Ծրագիրն իրենից ներկայացնում է ավագ սերունդներին (մասնավորապես՝ պապիկներին, տատիկներին) ներգրավելու իրավունք տրամադրելու մեխանիզմ՝ որպես ընտանիքում երեխաների խնամքի ծրագրի իրականացման մաս՝ ռազմավարական նպատակ 1-ի շրջանակներում (հատուկ նպատակ 1.4): Ինչպես նշվեց վերևում, ծրագրերի մանրամասները կներկայացվեն յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում առանձին միջոցառումների մակարդակով՝ որպես հաջորդ փուլում գործողությունների ծրագրի մաս:	

4	Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ 02.08.2024 12:49:10	Նախագծում թեև գենդերային հավասարությունը ներկայացված է, որպես խաչվող թեմա, սակայն ռազմավարական նպատակներն ու ծրագրերը պատշաճ չեն թիրախավորում տարբեր խմբերի կանանց ու նրանց կարիքները: Այսպես, Մասնավոր նպատակ 2.1 և այդ նպատակին ուղղված ծրագրերը չունեն գենդերային կոմպոնենտ և ուշադրություն չեն դարձնում հասարակությունում առկա կարծրատիպերին, որոնք կարող են խոչընդոտել կանանց, մասնավորապես գյուղաբնակ կամ փոքր քաղաքաբնակ կանանց մասնակցությունը սպորտային միջոցառումներին: Առաջարկում ենք այս և այլ նպատակների շրջանակներում առանձին ծրագրեր մշակել՝ հաշվի առելով կանանց տարբեր խմբերի կարիքները և առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց հասանելիությունն այդ ծրագրերին:	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Այս ռազմավարական փաստաթղթի շրջանակներում գենդերային անհավասարությունը նվազեցնելու հիմնական խնդիրը, որն իրականացվում է տարբեր միջոցառումների և ծրագրերի միջոցով, ընտանիքում անհավասարության նվազեցման ծրագրերն են, հատկապես երեխաների խնամքի հարցում, բայց ոչ միայն: Ռազմավարական ծրագիրը մի շարք միջոցառումների միջոցով հավասարակշռում է ընտանիքում առկա իրավունքներն ու պարտականությունները: Հատկապես նշում ենք ժողովրդագրական ռազմավարական ծրագրի և զուգահեռաբար մշակվող զբաղվածության ռազմավարական ծրագրի միջև կապի ապահովումը, ինչը թույլ է տալիս համակողմանիորեն անդրադառնալ գենդերային անհավասարության հիմնարար պատճառներին: Շնորհակալություն ձեր առաջարկների համար. մենք	

			համարում ենք, որ այլ հարցերն անհրաժեշտ են դիտարկելու այլ համապատասխան ռազմավարական փաստաթղթերի շրջանակներում, ձեր առաջարկները հաշվի կառնվեն:	
5	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Թեև նախագծում առկա է «Խթանել և պահպանել բնակչության հոգեկան առողջությունը» ծրագիրը, տեքստում անդրադարձ չի կատարվում կյանքի տարբեր կենսափուլերում և միգրացիոն տարբեր գործընթացներում հոգեկան առողջությանը, հոգեկան առողջության որակյալ և հարկադրանքի բոլոր դրսևորումները բացառող ծառայությունների անհրաժեշտությանը:	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Այս հարցը հաշվի կառնվի ներկայացված ծրագրերի շրջանակում առանձին միջոցառումների իրականացման ընթացքում:	
6	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելվածի 158-րդ կետում նշվում է. «Ծրագիր 3.1.3 Սոցիալական խնամքի տարբեր ձևերի՝ ներառյալ ավագ սերնդի խնամքի և պալիատիվ խնամքի կենտրոնների զարգացում՝ ավելի մեծ տարիքում արժանապատիվ և ներառական կյանք ապահովելու համար: Խնամքի ոլորտում ավագ սերնդի ներկայացուցիչներին ակտիվ աշխատանքային հնարավորություններով ապահովում»: Հարկ ենք համարում ընդգծել, որ տեքստում չի խոսվում պալիատիվ խնամքի հարցերի մասին, ուստի անհասկանալի է, թե	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	

		ինչ է ենթադրում տվյալ ծրագիրը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խնամքի բոլոր ծառայությունները պետք է համապատասխանեն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին, այդ թվում՝ զերծ լինեն ինստիտուցիոնալացմանը բնորոշ տարրերից, ուստի «պալիատիվ խնամքի կենտրոններ» ձևակերպումը ենթակա է վերանայման: Միաժամանակ առաջարկում ենք «ավելի մեծ տարիքում արժանապատիվ և ներառական կյանք ապահովելու համար» բառերը փոխարինել «ավելի մեծ տարիքում արժանապատիվ կյանք և համայնքում ներառումն ապահովելու համար» բառերով՝ նկատի ունենալով, որ «ներառական»-ը ոչ թե անձի կյանքն է, այլ միջավայրը:		
7	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելված 107-րդ կետում նշվում է. «Հատկանշական է, որ Արարատն ունի հաշմանդամ երեխաների ամենաբարձր ցուցանիշը 1000 բնակչի հաշվով»: Կրկնում ենք, որ «հաշմանդամ» բառը որպես գոյական կամ ածական օգտագործելը համարում ենք անընդունելի, քանի որ դա ամբողջովին արտահայտում է հաշմանդամության բժշկական մոտեցումը: Փոխարենն առաջարկում ենք առաջնորդվել	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	

		«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով՝ նախապատվությունը տալով «հաշմանդամություն ունեցող երեխաներ» եզրույթին: Առաջարկում ենք համապատասխանաբար փոփոխությունը կատարել գծապատկեր 29-ի վերնագրում և գծապատկերներում:		
8	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելված 107-րդ կետում նշվում է. «Հայաստանում տվյալները վկայում են հաշմանդամություն ունեցող անձանց թվի աճի մասին: Վերլուծությունը ցույց է տալիս մասնակի հաշմանդամություն ունեցող անձանց թվի գերակշռող աճ (3-րդ խումբ), որը հատկապես նշվել է 2015 թվականից՝ տղամարդկանց և 2012 թվականից՝ կանանց համար: Այս միտումն ակնհայտ է տարբեր մարզերում՝ Երևանում, Գեղարքունիքում, Լոռիում, Շիրակում և Արարատում հաշմանդամության տարբեր խմբերի առանձնահատուկ աճով կամ նվազումով»: Անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ համատեքստում է այս փաստը նշվում՝ խուսափելու դրա խտրական և մարդկային բազմազանության գաղափարին հակասող մեկնաբանություններից:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	

9	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելված 106-րդ կետում նշվում է. «Հարկ է նշել որ միջազգային լավագույն փորձին համապատասխան ներդրվել է ֆունկցիոնալ հաշմանդամության համակարգ, ինչը թույլ է տալիս կատարել հաշմանդամների պոտենցիալ տնտեսական ակտիվության ֆունկցիոնալ գնահատում»: Անձի ֆունկցիոնալության գնահատումը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես «պոտենցիալ տնտեսական ակտվիության գնահատման» գործիք: Այդ մեկնաբանությունը դուրս է «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի շրջանակից և լի է խտրական եզրակացությունների և պատերնալիզմի հանգելու ռիսկով:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	
10	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելված 106-րդ կետում նշվում է. «Հարկ է նշել որ միջազգային լավագույն փորձին համապատասխան ներդրվել է ֆունկցիոնալ հաշմանդամության համակարգ, ինչը թույլ է տալիս կատարել հաշմանդամների պոտենցիալ տնտեսական ակտիվության ֆունկցիոնալ գնահատում»: Որպես հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ղեկավարվող կազմակերպություն անընդունելի ենք համարում նախագծում «հաշմանդամներ» եզրույթի օգտագործումը: Այն նաև հակասում է հաշմանդամության մարդու իրավունքների	Առաջարկն ընդունվել է ի գիտություն, համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	

		մոտեցմանը և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքին:		
11	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելված 106-րդ կետում նշվում է. «Հարկ է նշել որ միջազգային լավագույն փորձին համապատասխան ներդրվել է ֆունկցիոնալ հաշմանդամության համակարգ, ինչը թույլ է տալիս կատարել հաշմանդամների պոտենցիալ տնտեսական ակտիվության ֆունկցիոնալ գնահատում»: Նախևառաջ անհրաժեշտ է նկատել, որ խոսքը ոչ թե «ֆունկցիոնալ հաշմանդամության» համակարգի, այլ «անձի ֆունկցիոնալության գնահատման» համակարգի մասին է: Առաջինը հազվադեպ օգտագործվում է բժշկական և դրան հարակից ոլորտների գրականությունում և որևէ կերպ չի կիրառվում հայաստանյան միջավայրում, այդ թվում՝ իրավական ակտերում:	Առաջարկն ընդունվել է ի գիտություն, համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	
12	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելվածի 106-րդ կետում նշվում է. «Համաձայն Առողջության որոշիչ գործոնների ազգային համագործակցության կենտրոնի, խոցելի բնակչությունն այն խմբերն ու համայնքներն են, որոնք հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ են՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և բնապահպանական ռեսուրսների, ինչպես նաև հիվանդության պատճառով առկա	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	

		սահմանափակումների պատճառով»: Անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչու է ընտրվել «խոցելի բնակչություն» եզրույթի առողջապահական համատեքստում օգտագործված տարբերակ: Փոխարենն առաջարկում ենք հիմնվել մարդու իրավունքների մոտեցմամբ և ընտրել առավել ներառական եզրույթ, որը չի կենտրոնանա բացառապես առողջապահական հարցերի վրա և կընդգրկի առավել լայն խմբերի, քան դրան հաջորդող նախադասությունում ներառված խմբերն են: Ավելին, հակասություն է առաջանում դրան հաջորդող նախադասության և սահմանման միջև, քանի որ, օրինակ, անհասկանալի է, թե ինչու են միայնակ ծնողները հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ:		
13	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելվածի 79-րդ կետում անհրաժեշտ է նկարագրել նաև հաշմանդամություն ունեցող անձանց սեռական և վերարտադրողական իրավունքների իրավիճակի մասին ամփոփ տեղեկություններ և աշխատանքի ուղղությունները, այդ թվում՝ ներառական առողջապահական ծառայությունների զարգացումը, ընտանիքի պլանավորման, հղիության արհեստական ընդհատումների անվտանգության և	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	

		մատչելիության, անվտանգ ծննդաբերության և հետծննդաբերական խնամքի ապահովումը:		
14	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելվածի 60-րդ կետում նշվում է. «Խնամքի հաստատություններն ու տնային խնամք տրամադրողները քիչ են»: Առաջարկում ենք նախադասությունը շարադրել նոր խմբագրմամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Խնամքի ծառայություններ, այդ թվում՝ տնային խնամք տրամադրողները քիչ են»: Խնամքի հաստատությունները որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես խնամքի ծառայության տարբերակ՝ հաշվի առնելով մարդու իրավունքների սկզբունքները, այդ թվում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի՝ նոր հաստատությունների ստեղծման արգելքը:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	
15	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագծի հավելվածում գծապատկեր 10-ի վերնագիրը ենթակա է խմբագրման՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հիմնադրման տարեթիվը:	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	
16	«Հաշմանդամություն ունեցող անձանց	Նախագծի հավելվածի 42-րդ «ավագ սերնդի խնամքի հաստատությունների» բառերն առաջարկում ենք փոխարինել «խնամքի ծառայությունների» բառերով՝ հիմք ընդունելով	Առաջարկն ընդունվել է: Համապատասխան	

	իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Հայաստանի Հանրապետության ապաինստիուցիոնալացման ձգտումը:	փոփոխություններ և լրացումներ կկատարվեն:	
17	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագիծն անհրաժեշտ է վերանայել Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի լույսի ներքո՝ բացառելու ռասայական խտրականության որևէ դրսևորում: Ավելին, ռազմավարությունում անհրաժեշտ է անդրադառնալ ազգային փոքրամասնությունների իրավունքներին և մշակութային բազմազանության խրախուսմանը:	Առաջարկն ընդունվել է: Առաջարկությունը հաշվի կառնվի ստացված մեկնաբանությունների հիման վրա լրացումներ կատարելու ժամանակ:	
18	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագիծը բավարար կերպով չի անդրադառնում կլիմայական փոփոխություններին, որոնք կարող են հանգեցնել բնակչության աղքատացմանը և տեղաշարժերին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վրա հնարավոր անհամաչափ ազդեցությանը:	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Համաձայն ենք, որ կլիմայի փոփոխությունն իր ազդեցությունն ունի միգրացիոն գործընթացների վրա թե՛ երկրի ներսում, թե՛ դրսում: Նշենք, որ ռազմավարական փաստաթղթի մշակման շրջանակներում զգալի վերլուծական աշխատանք է իրականացվել, այդ թվում՝ այս ուղղությամբ, մասնավորապես, ուսումնասիրվել են երկրի ներսում բնակչության տեղաշարժի խնդիրները՝ կապված գլոբալ	

			տաքացման և տնտեսությունը վրա համապատասխան ազդեցության հետ: Նշենք, որ այդ խնդիրներն ունեն ավելի երկարաժամկետ ազդեցություն՝ գերազանցելով անգամ այս ռազմավարական փաստաթղթի շրջանակը: Մենք կարծում ենք, որ պետության միգրացիոն ռազմավարությունը պետք է լինի առանձին համապարփակ փաստաթուղթ, որն ընդգրկում է ավելի բարդ հարցեր, այդ թվում՝ ներկայացված այս մեկնաբանության մեջ: Այդ իսկ պատճառով 4-րդ ռազմավարական նպատակի շրջանակներում առաջարկվում է առանձին միգրացիոն ռազմավարության մշակում: Այս խնդիրն անպայման հաշվի կառնվի միգրացիոն ռազմավարության մշակման և իրականացման շրջանակում	
19	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ	Նախագիծը չի անդրադառնում ժողովրդագրության և բնակարանի իրավունքի հարցերին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների համար մատչելի բնակարանային ծրագրերին:	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Ռազմավարական փաստաթղթի շրջանակներում կան առանձին ծրագրեր՝ ուղղված երեխաներ ունեցող ընտանիքների	

	29.07.2024 22:57:43		կենսապայմանների բարելավմանը: Ավելին, 2-րդ և 3-րդ ռազմավարական նպատակների շրջանակներում գործողությունների պլանի միջոցառումների մակարդակով առաջարկվում են կոնկրետ միջոցառումներ բնակարանային պայմանների և քաղաքային միջավայրի ներառականությունը բարձրացնելու համար, մասնավորապես ստանդարտների փոփոխման և կառուցապատողների համար պարտադիր պահանջների ներդրման միջոցով: Սակայն նշենք, որ բնակարանային խնդիրները համակողմանիորեն դիտարկվում են այս փուլում մշակվող մեկ այլ ռազմավարական փաստաթղթի շրջանակում:	
20	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ 29.07.2024 22:57:43	Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային և համանուն օրենքին՝ հաշմանդամություն ունեցող անձանց դիտարկելով որպես ակտիվ դերակատարների	Առաջարկն ընդունվել է: Առաջարկությունը հաշվի կառնվի ստացված մեկնաբանությունների հիման վրա լրացումներ կատարելու ժամանակ:	

		և նրանց ներառումը կյանքի բոլոր ոլորտներում համարելով ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը նպաստող գործոն:		
21	Hayk Hwvsepyan 19.07.2024 20:29:00	նախագիծը բացակայում է:	Նախագիծը և կից փաստաթուղթը կցված են:	
22	David bagmanyan 19.07.2024 19:17:38	Նախ արաչնային կտրեք Արտագաղթը երկրից դա մեծ հաջողություն կլինի 2 ամուր կապ հաստատեք Սփյուրքի հայ համայքների հետ վորը չունեք դուք վրկանիշ -10 ձեր	Առաջարկն ընդունվել է ի գիտություն: Ռազմավարության ընդունումը նպաստելու է նաև արտագաղթի հանգեցնող դրդապատճառների նվազեցմանը, որի մասին համապատասխան անդրադարձ ռազմավարության մեջ առկա է:	